

**ԵՊԲՀ առաջնային փաստաթղթերի, նյութի և մեթոդների ստուգման
հանձնաժողովի կողմից ատենախոսական աշխատանքների
փորձաքննության
Կանոնակարգ**

1. Հանձնաժողովի գործառույթի նպատակը և խնդիրները

Գիտական հետազոտությունների մակարդակը հնարավորինս մոտեցնել միջազգային մրցունակ չափանիշերին և օժանդակել պատրաստել բարձրորակ գիտամանկավարժական կադրեր:

Ելնելով այս նպատակից և առաջնորդվելով ՀՀ ԲՈՀ-ի ու Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի գիտության գծով պրոռեկտորի նոր պահանջներից, կանոնակարգը նախատեսում է՝

1. կասեցնել ատենախոսությունների նպատակին ու խնդիրներին չհամապատասխանող, ոչ ադեկվատ մեթոդներով հետազոտված, գրագրության տարրեր պարունակող, վիճակագրական հավաստիությունից շեղված ատենախոսական աշխատանքների հրապարակային պաշտպանությունը,
2. բացահայտել գիտական հետազոտությունների մեջ առաջ քաշված խնդիրների և օգտագործված մեթոդների ադեկվատությունը,
3. պարզաբանել թեզի գրականության ցանկի և հղումների համապատասխանությունն ու ինքնուրույնությունը,
4. բարձրացնել հետազոտողի և նրա ղեկավարի կամ խորհրդատուի պատասխանատվությունը ստացված տվյալների արժանահավատության և եզրահանգումների ու սեփական տվյալների համապատասխանության պահանջների նկատմամբ,
5. տեխնիկական կամ այլ բնույթի վրիպումների դեպքում հայցորդին բացատրել և շտկելու ժամանակ ու հնարավորություն տալ բարեփոխելու դիտողության արժանացած բաժինները,
6. ձգտել օժանդակել և ապահովել ՀՀ ԲՈՀ-ի կողմից ատենախոսական պահանջների ստանդարտների անթերի կատարումը:

2. Ընթացակարգը

1. Հայցորդը իր վերջնականորեն ձևակերպած թեզով, նյութի և մեթոդների ապացույցներով ներկայանում է հանձնաժողովի նախագահին կամ, անհրաժեշտության դեպքում, նախագահի տեղակալին:
2. Նախագահը ծանոթանում է ներկայացված փաթեթին և եթե համարում է, որ այն բավարարում է փորձաքննության պահանջներին, առաջարկում է լրացնել դիմում-հայտ և ստորագրում է դիմում-հայտի ստորին մասում (Առաջնային փաստաթղթերի մոտավոր ցանկը տես հավելված 1-ում):
3. Հայցորդը ստորագրված դիմում-հայտը աստենախոսության հետ միասին ներկայացնում է գիտական աշխատանքների գծով պրոռեկտորին՝ աշխատանքին ծանոթանալու և անհրաժեշտության դեպքում մակագրելու՝ փորձագիտական հանձնաժողովում այն քննարկելու պահանջով:
4. Մակագրված դիմում-հայտը ստանալուց հետո հանձնաժողովի նախագահը անհրաժեշտ տվյալները նշում է համապատասխան գրանցամատյանում և փաթեթը ուղարկում հանձնաժողովի կոմպետենտ փորձագետին, բացառիկ դեպքում այլ նեղ մասնագետի:
5. Փորձագետը 7-10 օրում հանգամանորեն ծանոթանում է աշխատանքի բովանդակությանը, մասնավորապես «Նյութը և մեթոդները» բաժնին՝ պարզաբանելով.
 - ա) դիմում-հայտում նշված և ներկայացված ապացույցների համապատասխանությունը,
 - բ) դուրս գրված փորձարարական կենդանիների կամ հիվանդների, նրանց ստուգիչ խմբերի թվաքանակի համապատասխանությունը վիճակագրական պահանջներին,
 - գ) փորձերի, կլինիկական դիտարկումների, սոցիոլոգիական հարցումների, ֆիզիոլոգիական, բիոքիմիական, մորֆոլոգիական, լաբորատոր և այլ բնույթի հետազոտությունների գրանցամատյաններում ըստ դիտարկվող խմբերի, մեթոդների ստացված արդյունքների իսկությունը, նրանց համապատասխանությունը թեզի «Նյութը և մեթոդները» բաժնի բովանդակությանը,
 - դ) վիճակագրական ընտրված մեթոդների ադեկվատությունը և արդյունքների հավաստիությունը,
 - ե) աղյուսակներում կամ գրաֆիկներում նշված փորձարարական կենդանիների, կլինիկական, սոցիոլոգիական հետազոտությունների տարբեր խմբերում նշված ռ-երի՝ այսինքն ստուգիչ և ենթափորձային կենդանիների, հիվանդների և առողջների

- խմբերի, սոցիոլոգիական հետազոտության խմբերի մասնակիցների համապատասխանությունը 2-րդ գլխում նշված թվերի հետ,
- զ) հյուսվածաբանական, ֆիզիոլոգիական, կենսաքիմիական, իմունոլոգիական և այլ բնույթի հետազոտությունների թվի համապատասխանությունը դիմում-հայտում նշված ապացույցների թվին,
- է) գրական հղումների հավաստիությունը և համապատասխանությունը գրականության ցանկին,
- թ) եզրակացությունների համապատասխանությունը աշխատանքի նպատակին և խնդիրներին,
- ժ) ատենախոսության կառուցվածքի և դիզայնի համապատասխանությունը ՀՀ ԲՈՂ-ի պահանջներին:

Փորձաքննությունից հետո փորձագետը գրավոր ձևով շարադրում է իր կարծիքը աշխատանքի վերաբերյալ և ամփոփում ներկայացված փաստերի ու ապացույցների հավաստիությունը (արժանահավատ է, մասամբ է արժանահավատ կամ արժանահավատ չէ):

Հանձնաժողովի նիստերը գումարվում են ամսական 1-2 անգամ՝ կախված փորձաքննության ներկայացված աշխատանքների քանակից:

Հանձնաժողովի անդամներին և հայցորդներին նիստի օրվա և ժամի մասին տեղյակ է պահում հանձնաժողովի քարտուղարը:

Նիստերի միջև ընկած ժամանակաշրջանում աշխատանքները կատարվում են հանձնաժողովի նախագահի, անհրաժեշտության դեպքում՝ տեղակալի կողմից:

Նիստը վարում է նախագահը:

Նիստերին հայցորդները ներկայանում են իրենց ատենախոսություններով:

Նիստի ընթացքում հայցորդի ներկայությամբ փորձագետը ներկայացնում է իր կարծիքը, դիտողությունները և նրանց հիմնավորումները: Հանձնաժողովի անդամները և՛ փորձագետին, և՛ հայցորդին տալիս են հարցեր, անում առաջարկություններ և եզրահանգումներ, որից հետո բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ քվեարկվում է ներկայացված առաջնային փաստաթղթերի ապացույցների, նյութի և մեթոդների գիտական վերջնարդյունքի արժանահավատությունը (արժանահավատ, մասամբ արժանահավատ, ոչ արժանահավատ):

Եթե աշխատանքում առկա են մեխանիկական սխալներ, բացթողումներ կամ ոչ էական անճշտություններ, հանձնաժողովը իրավասու է հայցորդին տալ ժամանակ շտկումների համար, հետաձգել և հաջորդ նիստերին անդրադառնալ կրկնակի քննարկման:

Նիստի ընթացքում նախագահը կամ տեղակալը լրացնում են արձանագրությունը, համարակալում, ընդգծում եզրկացությունը (տես հավելված 2)

Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամները:

Արձանագրության ստորագրված մեկ օրինակը, դիմում-հայտի և փորձագետի գրավոր կարծիքի հետ միասին պահվում է նախագահի մոտ և նիստի արդյունքների մասին գրանցվում համապատասխան մատյանում:

Նիստից հետո արձանագրությունները ուղարկվում են գիտական աշխատանքների գծով պրոռեկտորին՝ հաստատման համար:

Օանդություն. Փորձագիտական հանձնաժողովի նիստերից երկու և ավել անգամ անհարգելի պատճառով բացակայելու կամ իր պարտականությունները բարեխղճորեն չկատարելու դեպքում տեղեկատվությունը զեկուցագրի ձևով ներկայացվում է ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտորին, որն էլ հրամանագրով իրականացնում է հանձնաժողովի անդամների ռոտացիա:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԻ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ՑԱՆԿԸ՝**

**նշելով ներկայացված փաստերի, նյութերի, ապացույցների բնույթը և
քանակը**

1. Թեզի մեկ օրինակ:
2. Փորձարարական կենդանիների դուրս գրման անդորրագրերի պատճենները:
3. Օգտագործված գրականության ողջ քարտադարանը (սկզբաղբյուրների մշակումը):
4. Փորձերի արձանագրության մատյանը՝ սեղմ ձևով նշելով նրանում գրանցված արդյունքների բովանդակությունը:
5. Մորֆոլոգիական հետազոտության համար օգտագործված հյուսվածքների պարաֆինային բլոկների, պատրաստուկների, էլեկտրոնոգրամմաների քանակը:
6. Հետազոտվող դեղամիջոցների ներմուծման կամ այլ ֆիզիոլոգիական պարամետրերի ցուցանիշների գրանցման թղթապանակը:
7. Կենսաքիմիական հետազոտությունների արդյունքների գրաֆիկական գրանցման թղթապանակը:
8. Հիվանդության պատմությունից արված թեմատիկ, հարկլինիկական կամ կլինիկական քաղվածքները (քարտերը), ամբուլատոր-կլինիկական դիտարկումների քարտերը (ըստ հետազոտվող խմբերի):
9. Համաճարակաբանական, հիզիենիկ, ֆիզիկական և այլ բնույթի հարցումների տվյալների գրանցման մատյանը (ըստ հետազոտվող խմբերի):
10. Արխիվյան հիվանդության պատմությունների, էպիկրիզների, ախտորոշիչ հետազոտությունների, բուժման սխեմաների քարտերը, բիոպսիոն նյութերի հիստոլոգիական հետազոտման ուղեգրերի պատճենները՝ հաստատված հիմնարկի ղեկավարի կողմից:
11. Հետազոտված հիվանդների ցուցակը՝ հաստատված հիմնարկի ղեկավարի կողմից:
12. Վիճակագրական մշակման եղանակը, համակարգչային ծրագիրը և արդյունքների վերլուծության մատյանը:

(Հանձնաժողովի նիստի արձանագրության նմուշ)

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտոր

Կ.գ.դ., պրոֆեսոր՝ Կ. Բ. Ենկոյան

Կ.Տ. _____

« _____ » _____ 2016թ.

Գիտական հետազոտություններում օգտագործված
առաջնային փաստաթղթերի, նյութի և մեթոդների
ստուգման հանձնաժողովի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ _____

Ասպիրանտ՝

Աշխատանքի վերնագիրը

Փորձաքննության ներկայացված նյութի, մեթոդների ապացույցների թվարկումը
և քանակը.

Եզրակացություն. փորձաքննության ենթարկված գիտական հետազոտության նյութը,
մեթոդները, գրականության սկզբնաղբյուրները

1. Արժանահավատ են 2. մասամբ են արժանահավատ (լրացման կարիք ունեն)
3. արժանահավատ չեն (ընդգծվում է)

Հանձնաժողովի նախագահ՝

բ.գ.դ., պրոֆեսոր Ենգիբարյան Ա.Ա.
նախագահի տեղակալ՝

Կ.գ.թ դոցենտ Քոչարյան Ս.Պ.
քարտուղար՝

բ.գ.դ. պրոֆեսոր Թադևոսյան Ա.Է.

Անդամներ.

1. Գալստյան Ս.Գ.՝ բ.գ.դ., պրոֆեսոր

2. Ավագյան Տ.Գ.՝ բ.գ.դ., պրոֆեսոր

3. Վիրաբյան Ռ.Թ., բ.գ.դ., պրոֆեսոր

4. Վարդանյան Գ.Ջ.՝ բ.գ.դ., պրոֆեսոր

5. Հակոբյան Գ.Վ.՝ բ.գ.դ., պրոֆեսոր

6. Սարգսյան Ս.Գ.՝ բ.գ.թ., դոցենտ

7. Դիլբարյան Կ.Հ., դ.գ.թ., ավագ դասախոս

8. Հարությունյան Հ.Վ., բ.գ.թ., դասախոս

**Առաջնային փաստաթղթերի, նյութի և մեթոդների ստուգման
հանձնաժողովի կազմը**

Հանձնաժողովի նախագահ՝

բ.գ.դ., պրոֆեսոր Ենգիբարյան Ա.Ա.

նախագահի տեղակալ՝ գիտության վարչության պետ,

կ.գ.թ. դոցենտ Քոչարյան Ս.Պ.

քարտուղար՝

բ.գ.դ. պրոֆեսոր Թադևոսյան Ա.Է.

Անդամներ.

1. Գալստյան Ս.Գ. բ.գ.դ., պրոֆեսոր
2. Ավագյան Տ.Գ. բ.գ.դ., պրոֆեսոր
3. Վիրաբյան Ռ.Թ. բ.գ.դ., պրոֆեսոր
4. Վարդանյան Գ.Ջ. բ.գ.դ., պրոֆեսոր
5. Սարգսյան Ս.Գ. բ.գ.թ., դոցենտ
6. Հակոբյան Գ.Վ. բ.գ.դ., պրոֆեսոր
7. Դիլբարյան Կ.Հ., դ.գ.թ., ավագ դասախոս
8. Հարությունյան Հ.Վ. բ.գ.թ., դասախոս